Նախագիծ
Կ-452-02.12.2022-ՊԻ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-452-02.12.2022-ՊԻ-011/0) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) 3-րդ կետում վերջակետ կետադրական նշանը փոխարինել միջակետ կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կազմերը ձևավորվում են համապատասխանաբար կոռուպցիոն

հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներից:»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներն ունեն քաղաքացիական կամ քրեական մասնագիտացում: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորներն ունեն քաղաքացիական, իսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորները՝ քրեական մասնագիտացում:».

2) 2-րդ մասում «քրեական վարույթները, » բառերից հետո լրացնել «մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթները, ինչպես նաև» բառերով.

3) 2.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2.1. Հայաստանի Հանրապետության տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները քննում են միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորները:».

4) 2.2-2.3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ առնվազն 35 դատավորի թվակազմով և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը՝ առնվազն 30 դատավորի թվակազմով.»:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «դատախազի կողմից հարուցված՝» բառերով:

Հոդված 6. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մասնագիտացված դատարանները կարող են նստավայրեր ունենալ մարզերում:»:

Հոդված 7~~3~~. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետում «22» թիվը փոխարինել «16» թվով.

2) 2-րդ կետում «24» թիվը փոխարինել «18» թվով.

3) 3-րդ կետում վերջակետ կետադրական նշանը փոխարինել միջակետ կետադրական նշանով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը՝ առնվազն 12 դատավորի թվակազմով, որից առնվազն 6-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացմամբ, առնվազն 6-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության մասնագիտացմամբ դատավորներ:»

Հոդված 8~~4~~. Օրենքի 28.1-ին հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետով.

«5.1) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով իրականացնում է մշտադիտարկում դատարանում գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ:»:

Հոդված 10. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) երկրորդ նախադասությունում «առանձնահատկությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև դրանք քննող դատավորների ցանկը» բառերը.

2) երրորդ նախադասությունը հանել:

Հոդված 11. Օրենքի 42-րդ հոդվածը՝

1) լրացնել նոր 2.1-2.2-րդ մասերով.

«2.1. Բարձրագույն դատական խորհուրդը քաղաքացիական մասնագիտացման դատավորի պաշտոնավարման ժամկետի ավարտից, ոչ շուտ, քան երկու տարի առաջ համապատասխան դատարանի նախագահի դիմումի հիման վրա կարող է որոշում կայացնել գործերի բաշխման ցանկում փոփոխություններ կատարելու և տվյալ դատավորին միայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված վճարման կարգադրություն արձակելու գործեր և պարզեցված վարույթի կարգով քննության ենթակա գործեր հանձնելու վերաբերյալ: Սույն մասով նախատեսված որոշումը կայացնելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում համապատասխան դատարանի ծանրաբեռնվածությունը:

2.2. Քաղաքացիական մասնագիտացման դատավորը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի, համապատասխան դատարանի նախագահի համաձայնությամբ կարող է դիմել Բարձրագույն դատական խորհրդին՝ առաջարկելով որոշում կայացնել գործերի բաշխման ցանկում փոփոխություններ կատարելու և իրեն մինչև երկու տարի ժամկետով միայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված վճարման կարգադրություն արձակելու գործեր և պարզեցված վարույթի կարգով քննության ենթակա գործեր հանձնելու վերաբերյալ: Սույն մասով նախատեսված որոշումը կայացնելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում համապատասխան դատարանի ծանրաբեռնվածությունը:».

2) 3-րդ մասի 1-ին կետում «տասնօրյա» բառը փոխարինել «տասնհինգօրյա» բառերով.

3) 7-րդ մասում «առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում» բառերը փոխարինել «առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարաններում» բառերով.

4) 8-րդ մասը «ընդհանուր իրավասության» բառերից հետո լրացնել «քրեական» բառով:

Հոդված 12~~5~~. Օրենքի 43-րդ հոդվածի՝

1) 2.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված ակտերի վերանայման գործերը բաշխվում են միայն կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացմամբ, իսկ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված ակտերի վերանայման գործերը՝ միայն հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության մասնագիտացմամբ դատավորների միջև:».

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~6~~13. Օրենքի 45-րդ հոդվածի՝

1) վերնագրում **«, մինչդատական քրեական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում միջնորդություններ և բողոքներ քննող»** բառերը փոխարինել **«օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող»** բառերով.

2) 1-ին մասի 5-րդ կետում «դատարանի նախագահի» բառերը փոխարինել «քաղաքացիական և քրեական դատարանների նախագահների» բառերով.

3) 2.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Սույն օրենսգրքի 21-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված միջնորդություններ քննող դատավորների համար Բարձրագույն դատական խորհուրդը

կարող է սահմանել հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ:»:

Հոդված 14. Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասում «առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահն» բառերը փոխարինել «առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների նախագահներն» բառերով:

Հոդված 15. Օրենքի 71-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով.

«5. Դատավորը պարտավոր չէ ինքնաբացարկ հայտնել կամ ընդունել բացարկը, եթե դատական ակտ կայացնելու համար չի կարող ստեղծվել արդարադատության մեկ այլ մարմին:»:

Հոդված 16. Օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Բարձրագույն դատական խորհրդի նախագահը՝

1) հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը.

2) ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները.

3) ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում.

4) հաստատում է դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը դատարաններում շրջանառելու կարգը.

5) սահմանում է դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը.

6) դատական կարգադրիչների ուսուցման ծրագրերում ներառման նպատակով Արդարադատության ակադեմիա է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ.

7) սահմանում է դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման կարգը.

8) իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ:»:

Հոդված 17. Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 26-րդ, 37-րդ, 42-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 18. Օրենքի 98-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) «106-րդ հոդվածում» բառերը փոխարինել «106-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում» բառերով.

2) «փաստաբանական դպրոց» բառերը փոխարինել «փաստաբանական ակադեմիա» բառերով:

Հոդված 19. Օրենքի 106-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 106. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձի, ինչպես նաև վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն ունեցող անձի ընդգրկման կարգը

1. Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար Բարձրագույն դատական խորհուրդ հայտ ներկայացնելու իրավունք ունի սույն օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի 1-4 և 6-րդ կետերով սահմանված պահանջները բավարարող և

1) վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն ունեցող անձը.

2) իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին տասը տարիների ընթացքում առնվազն հինգ տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամում իրավունք դասավանդած կամ գիտական

հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը (այսուհետ՝ գիտական աստիճան ունեցող հավակնորդ):

2. Սույն հոդվածով նախատեսված հավակնորդը դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու հայտը ներկայացնում է դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով տրված հայտարարությամբ նշված ժամկետներում:

3. Հայտին կցվում են սույն օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը, իսկ գիտական աստիճան ունեցող հավակնորդը՝ նաև գիտական աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթը, գիտական աշխատությունների և հրապարակումների ցանկը:

4. Սույն հոդվածով նախատեսված հավակնորդի հայտն ստուգվում է սույն օրենսգրքի 99-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածով նախատեսված հավակնորդը սույն օրենսգրքով սահմանված կարգով անցնում է որակավորման ստուգման հարցազրույցի փուլը:»:

Հոդված 20. Օրենքի 107-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 1-ին կետից հանել «և» տառը.

2) 2-րդ կետում վերջակետ կետադրական նշանը փոխարինել «, և» բառերով.

3) լրացնել նոր 3-րդ կետով.

«3) վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն ունեցող հավակնորդների ցուցակից:»:

Հոդված 21. Օրենքի 108-րդ հոդվածում՝

1) ուժը կորցրած ճանաչել 1.1-ին և 3-րդ մասերը.

2) 2-րդ մասում՝

ա. «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.

բ. 2-րդ կետում վերջակետ կետադրական նշանը փոխարինել միջակետ կետադրական նշանով.

գ. լրացնել նոր 3-րդ կետով.

3) համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի, այդ թվում՝ հիպոթետիկ իրավական նորմ, դատական ակտում արտահայտված դիրքորոշում, տեսության մեջ արտահայտված իրավական կարծիքներ և այլն) հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ հմտությունները ու որակները գնահատելու համար:».

3) 4-րդ մասում «2-րդ կետով և 3-րդ մասով» բառերը փոխարինել «2-3-րդ կետերով» բառերով.

4) 8-րդ մասից հանել «, հոգեբանական թեստի արդյունքները» բառերը.

5) լրացնել նոր 9-րդ մասով՝

«9. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հոգեբանի ներգրավման և վարձատրության կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:»:

Հոդված 22. Օրենքի 109-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Սույն օրենսգրքի 106-րդ հոդվածով նախատեսված հավակնորդների համար Արդարադատության ակադեմիայում օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է ուսուցում՝ դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ գործնական հմտությունների զարգացման մասով:»:

Հոդված 23. Օրենքը լրացնել նոր 110.1-ին հոդվածով.

«**Հոդված 110.1. Դատավորների թեկնածուների ցուցակում հատուկ կարգով որակավորման ստուգում անցած անձին ընդգրկելը**

1. Դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան բաժինը լրացնելու նպատակով Բարձրագույն դատական խորհուրդը կարող է որոշում կայացնել հատուկ

կարգով որակավորման ստուգում անցկացնելու անհրաժեշտության մասին, որի դեպքում անձն ընդգրկվում է դատավորների թեկնածուների ցուցակում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսուցում անցնելու:

2. Հատուկ կարգով որակավորման ստուգման նկատմամբ («mutatis mutandis») կիրառվում են սույն օրենսգրքի 95-109-րդ հոդվածներով սահմանված կանոնները՝ այնքանով, որքանով կիրառելի են, և եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով:

3. Հատուկ կարգով որակավորման ստուգման կազմակերպման և իրականացման ձևի ու կարգի, կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ նվազագույն պահանջների և հատուկ կարգով որակավորման ստուգման անցկացման այլ առանձնահատկությունները Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանելիս պետք է ապահովվեն որակավորման ստուգման էական բարդությունը:

4. Գրավոր քննության բողոքարկման արդյունքները հրապարակելուց, իսկ բողոքներ չլինելու դեպքում՝ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո Դատական դեպարտամենտը գրավոր քննության հանրագումարային արդյունքներով անհրաժեշտ միավորները հավաքած անձանց ցուցակը ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդ՝ հարցազրույց անցկացնելու նպատակով:

5. Դատական դեպարտամենտը սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ցուցակը Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու հետ միաժամանակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում ցուցակում ներառված անձանց բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկները՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

6. Հարցազրույցի արդյունքներով ընտրված թեկնածուներին Բարձրագույն դատական խորհուրդը ներառում է դատավորների թեկնածուների ցուցակում՝ ըստ համապատասխան մասնագիտացումների:»:

Հոդված ~~6~~24. Օրենքի 112-րդ հոդվածի 1.2-րդ մասում «քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և վերաքննիչ քաղաքացիական դատարանում

հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին» բառերը փոխարինել «հակակոռուպցիոն դատարանի» բառերով:

Հոդված 25. Օրենքի 115-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացվում է հետևյալ հաջորդականությամբ.».

բ. լրացնել նոր 6-րդ կետով.

«6) վեցերորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին:».

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալիս Հանրապետության նախագահի նշանակմանը ներկայացնելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն չի ներկայացվում այն թեկնածուին, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում:».

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածով սահմանված գրավոր առաջարկությունները ներկայացնում է Դատական դեպարտամենտը՝ համապատասխան հիմքն առաջանալու օրվանից եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի հասցեով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոստային առաքմամբ:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Դատական դեպարտամենտը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված թեկնածուին առաջարկություն չի ներկայացնում, եթե Բարձրագույն դատական խորհուրդը համապատասխան թեկնածուի մասով որոշում է կայացրել տվյալ թեկնածուին առաջարկություն չներկայացնելու մասին: Սույն մասով նախատեսված որոշումը կայացնելը հանգեցնում է համապատասխան թեկնածուին դատավորների թեկնածուների ցուցակից հանելուն:»:

Հոդված 26. Օրենքի 116-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «մեկշաբաթյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով.

2) 4-րդ մասում «և 5-րդ» բառերը փոխարինել «, 5-րդ և 6-րդ» բառերով:

Հոդված 27. Օրենքի 117-րդ հոդվածը լրացնել նոր 7-րդ մասով.

«7. Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահի առարկությունն ընդունելու դեպքում թեկնածուն հանվում է դատավորների թեկնածուների ցուցակից:»:

Հոդված ~~7~~28. Օրենքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և հակակոռուպցիոն մասնագիտացման բաժիններով: Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ներառվում են կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինները.»:

Հոդված ~~8~~29. Օրենքի 123-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «քաղաքացիական և վարչական մասնագիտացման բաժիններում» բառերից հետո լրացնել «, իսկ հակակոռուպցիոն բաժնի դեպքում կոռուպցիոն

հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժիններում» բառերով, իսկ «համապատասխան մասնագիտացման բաժինը» բառերից հետո լրացնել « կամ ենթաբաժինը» բառերով.

2) 3-րդ մասում՝ «մասնագիտացման բաժնների» բառերից հետո լրացնել «կամ ենթաբաժինների» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով.

«8.1. Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում նշված անձը դիմումին կցում է բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը:»:

Հոդված ~~9~~30. Օրենքի 124-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դիմումներ ընդունելու ժամկետի ավարտից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ~~Բարձրագույն դատական խորհուրդը~~Դատական դեպարտամենտը բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ ~~քսանօրյա~~ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է թեկնածուի անձնական գործը, իսկ թեկնածուի՝ դատավոր չլինելու դեպքում նրա ներկայացրած և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը, այդ թվում՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց զրույցի:».

2) 2-րդ մասը «որակները,» բառից հետո լրացնել «թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը,» բառերով.

3) 5-րդ և 6-րդ մասերը «բաժնի» բառից հետո լրացնել «կամ ենթաբաժնի» բառերով.

4) 10-րդ մասը «բաժինը» բառից հետո լրացնել «կամ ենթաբաժինը» բառերով:

Հոդված 31. Օրենքի 127-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացվում է հետևյալ հաջորդականությամբ.».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հանրապետության նախագահի նշանակմանը ներկայացնելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն չի ներկայացվում այն անձին, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում:».

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածով սահմանված գրավոր առաջարկությունները ներկայացնում է Դատական դեպարտամենտը՝ համապատասխան հիմքն առաջանալու օրվանից եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի հասցեով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոստային առաքմամբ:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Դատական դեպարտամենտը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված թեկնածուին առաջարկություն չի ներկայացնում, եթե Բարձրագույն դատական խորհուրդը համապատասխան թեկնածուի մասով որոշում է կայացրել տվյալ թեկնածուին առաջարկություն չներկայացնելու մասին: Սույն մասով նախատեսված որոշումը կայացնելը հանգեցնում է համապատասխան թեկնածուին Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից հանելուն:»:

Հոդված ~~10~~32. Օրենքի 132-րդ հոդվածում 3-րդ մասի 2-րդ նախադասությունը «կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման» բառերից հետո լրացնել «կամ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն

հանցագործությունների քննության գործերով մասնագիտացման» բառերով, իսկ 3-րդ նախադասությունը «հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման» բառերից հետո լրացնել «կամ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման» բառերով:

Հոդված 33. Օրենքի 133-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունում «Բարձրագույն դատական խորհուրդը» բառերը փոխարինել «Դատական դեպարտամենտը» բառերով:

Հոդված 34. Օրենսգրքի 155-րդ հոդվածի 6-րդ մասում «հնգօրյա» բառը փոխարինել «տասնհինգօրյա» բառով:

Հոդված 35. Օրենքի 165-րդ հոդվածը լրացնել նոր 3-4-րդ մասերով.

«3. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում դատավորի լիազորությունների կասեցումը տևում է մեկ ամսից ավելի, ապա տվյալ դատավորի փոխարեն դատարանում շարունակում է պաշտոնավարել համապատասխան մասնագիտացման ռեզերվային դատավորը՝ սույն օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով, իսկ համապատասխան մասնագիտացման ռեզերվային դատավորի բացակայության դեպքում տվյալ դատավորի պաշտոնը համարվում է թափուր:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում, եթե քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող հիմքով, դատավորը ձեռք է բերում ռեզերվային դատավորի կարգավիճակ:»:

Հոդված ~~10~~36. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-2-րդ, 7-8-րդ հոդվածների, 12-րդ

հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 3-րդ կետերի, 24-րդ, 28-րդ և 32-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2024թ.-ի հունվարի 1-ից:

2. Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է Օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հոկտեմբերի 15-ի ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածով վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների թափուր պաշտոնների համալրման իրականացման համար սահմանված առանձնահատկությունները: ~~«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հոկտեմբերի 15-ի ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանված և այդ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սկսված երեք տարվա ժամկետի հաշվարկը շարունակվում է:~~

3. Սույն օրենքի 1-2-րդ, 7-8-րդ հոդվածները, 12-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 3-րդ կետերը, 24-րդ, 28-րդ և 32-րդ հոդվածներն ~~օրենքն~~ ուժի մեջ մտնելու պահից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի հոկտեմբերի 15-ի ՀՕ-331-Ն օրենքով սահմանված կարգով վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավոր նշանակված դատավորները շարունակում են պաշտոնավարել վերաքննիչ

հակակոռուպցիոն դատարանում որպես համապատասխանաբար հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացման դատավորներ, և շարունակում են քննել իրենց վարույթում առկա քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (այսուհետ՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր) և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք համարվում են փոխանցված վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին: Սույն մասով նախատեսված դատավորների վարույթում գտնվող մյուս քաղաքացիական և քրեական գործերը սույն օրենքի 1-2-րդ, 7-8-րդ հոդվածները, 12-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 3-րդ կետերը, 24-րդ, 28-րդ և 32-րդ հոդվածներն ~~օրենքն~~ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վերաբաշխվում են համապատասխանաբար վերաքննիչ քաղաքացիական և վերաքննիչ քրեական դատարանների դատավորների միջև:

4. Սույն օրենքի 1-2-րդ, 7-8-րդ հոդվածները, 12-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 3-րդ կետերը, 24-րդ, 28-րդ և 32-րդ հոդվածներն ~~օրենքն~~ ուժի մեջ մտնելու պահից վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների թափուր պաշտոնների համալրման նպատակով մեկնարկած գործընթացը շարունակվում է որպես վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման գործընթաց՝ ըստ համապատասխան ենթաբաժինների:

5. Սույն օրենքի 1-2-րդ, 7-8-րդ հոդվածները, 12-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 3-րդ կետերը, 24-րդ, 28-րդ և 32-րդ հոդվածներն ~~օրենքն~~ ուժի մեջ մտնելուց

հետո՝ քսանօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը՝

~~1) փոփոխություններ է կատարում Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի N ԲԴԽ-23-Ն-1 և 2021 թվականի մարտի 25-ի N ԲԴԽ-16-Ն-6 որոշումների մեջ.~~

~~2) Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները համապատասխանեցնում է սույն օրենքին.~~

~~3)~~ սահմանում է վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորների կնիքների և դրոշմակնիքների նկարագրությունը:

6. Մինչև վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորներին կնիքների և դրոշմակնիքների տրամադրումը վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացմամբ և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության մասնագիտացմամբ դատավորներն օգտագործում են մինչ այդ որպես համապատասխանաբար վերաքննիչ քրեական և վերաքննիչ քաղաքացիական դատարանների դատավոր ունեցած կնիքները և դրոշմակնիքները:

7. Սույն օրենքի 35-րդ հոդվածով սահմանված կարգավորումները կիրառվում են նաև, եթե Օրենքի 165-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքով Բարձրագույն դատական խորհրդի՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացրած որոշմամբ դատավորի լիազորությունների կասեցումը շարունակվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց պահից մեկ ամսից ավելի:

8. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի դատական երաշխիքների վարույթները և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններն ու բողոքները քննող առանձին դատավորներին, որոնք առաջին անգամ դատավորի պաշտոնում նշանակվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-265-Ն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նոր գործեր չեն հանձնվում, իսկ իրենց

վարույթում առկա գործերը ավարտելուց հետո համապատասխան դատավորները ձեռք են բերում ռեզերվային դատավորի կարգավիճակ:

9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամետում Բարձրագույն դատական խորհուրդը սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դատավորների համար կազմակերպում է Օրենքի 110.1-ին հոդվածով սահմանված որակավորման հատուկ ստուգում:

10. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված որակավորման հատուկ ստուգմանը չմասնակցած և որակավորման հատուկ ստուգումը չհաղթահարած դատավորների համար Արդարադատության ակադեմիայում օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է լրացուցիչ վերապատրաստում՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկած առարկայական կուրսերի վերաբերյալ: Սույն հոդվածով նախատեսված անձինք լրացուցիչ վերապատրաստումը համարվում են անցած դրական գնահատման դեպքում, և եթե նրանք մասնակցել են լրացուցիչ վերապատրաստման համապատասխան առարկայական կուրսի բոլոր ժամերին, այդ թվում, երբ նրանց բացակայությունը ճանաչվել է հարգելի:

11. Մինչև սույն հոդվածով սահմանված կարգով որակավորման հատուկ ստուգում կամ լրացուցիչ վերապատրաստում անցնելը սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված ռեզերվային դատավորները չեն կարող Օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով շարունակել պաշտոնավարել որպես դատավոր կամ Օրենքով սահմանված կարգով դատավոր նշանակվել: Նրանց փոխարեն դատարանում շարունակում է պաշտոնավարել համապատասխան մասնագիտացման ռեզերվային դատավորը՝ Օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի կանոններով, իսկ համապատասխան մասնագիտացման ռեզերվային դատավորի բացակայության դեպքում տվյալ դատավորի պաշտոնը համարվում է թափուր:

12. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի դատական երաշխիքների վարույթները և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններն ու բողոքները քննող, ինչպես նաև

վերաքննիչ քրեական դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի դատական երաշխիքների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված վարույթներով վերանայում իրականացնող առանձին դատավորները, որոնք մինչև առանձին դատավորի պաշտոնում ընտրվելը եղել են քրեական մասնագիտացման գործող դատավորներ, շարունակում են պաշտոնավարել համապատասխանաբար առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնում:

13. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Դատական դեպարտամենտը վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված, բարեվարքության ուսումնասիրություն չանցած թեկնածուներին գրավոր տեղեկացնում է մեկշաբաթյա ժամկետում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ ներկայացնելու անհրաժեշտության մասին: Սույն մասով նախատեսված ժամկետում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ չներկայացնելը հիմք է թեկնածուին ցուցակից հանելու համար: Բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ ներկայացնելու ժամկետի ավարտից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում Դատական դեպարտամենտը լրացված հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ բսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու համար: Բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է խորհրդատվական եզրակացությունը, որի հիման վրա կարող է որոշում կայացնել թեկնածուին՝ վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից հանելու մասին:

14. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը համարվում է վերակազմակերպված Երևան քաղաքի առաջին ատյանի ընդահուր իրավասության քաղաքացիական և քրեական

դատարանների:

15. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորները շարունակում են պաշտոնավարել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության համապատասխանաբար քաղաքացիական և քրեական դատարանի դատավորների պաշտոնում և շարունակում են քննել իրենց վարույթում եղած գործերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով:

16. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի լիազորությունները դադարում են և Բարձրագույն դատական խորհուրդը Օրենքի 121-րդ հոդվածով սահմանված կարգով լուծում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների նախագահների նշանակման համար առաջարկություն ներկայացնելու հարցը:

17. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով:

18. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) սահմանում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների նստավայրերը, դրանց սպասարկման տարածքները և հաստատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների դատավորների՝ ըստ նստավայրերի բաշխումն ու թվակազմը.

2) սահմանում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների դատավորների կնիքների և դրոշմակնիքների նկարագրությունը:

19. Մինչև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների դատավորներին կնիքների և դրոշմակնիքների տրամադրումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարանների դատավորներն օգտագործում են մինչ այդ որպես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր ունեցած կնիքները և դրոշմակնիքները:

Նախագիծ
Կ-452[1]-02.12.2022-ՊԻ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-452[1]-02.12.2022-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածում~~ը~~.

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում» բառերը փոխարինել «մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ մասով.

«2.2. Սույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով կայացված ակտերի դեմ բողոքների քննության նկատմամբ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» ենթակետ՝

«գ) սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասը «իրավասության» բառից հետո լրացնել «քաղաքացիական» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 64-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ կետով.

«4.1. Դատարանը կարող է ապացույց պահանջելու մասին միջնորդությունը բավարարել առանց ապացույց պահանջելու մասին առանձին ակտի ձևով որոշման կայացման, եթե դատարանը պահանջվող տեղեկատվությունը կարող է ստանալ սույն օրենսգրքի 64.1-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդկությամբ նոր 64.1-րդ հոդվածով.

«**Հոդված 64.1. Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով տեղեկություններ ձեռք բերելը**

1. Դատարանը միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով կարող է գործի քննության համար անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել այլ մարմիններից և անձանցից:

2. Դատարանին անհրաժեշտ տեղեկատվությունն էլեկտրոնային տեղեկատվական համակարգում ինքնաշխատ գեներացվում է հարցմամբ ներկայացված տեղեկությունների հիման վրա: Հարցման պատասխանն ինքնաշխատ պատրաստվում է էլեկտրոնային փաստաթղթի ձևով, որը հավաստվում է էլեկտրոնային տեղեկատվական համակարգի կողմից: Էլեկտրոնային տեղեկատվական համակարգից հարցման պատասխանի արտատպված օրինակը հավասարեցվում է տեղեկությունը տնօրինող համապատասխան մարմնից դիմումի կամ որոշման հիման վրա ստացված պատասխանին:»:

Հոդված 6. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 6-րդ մասում «15-րդ օրն» բառերը փոխարինել «յոթերորդ օրն» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 97-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող և փաստաբան-ներկայացուցիչ չունեցող ֆիզիկական անձի, ինչպես նաև ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում գտնվող կամ բուժական հիմնարկում ստացիոնար բուժում ստացող գործին մասնակցող անձանց նկատմամբ:»:

Հոդված 8. Օրենսգրքի 99-րդ հոդվածի 3-րդ մասում «15-րդ օրը» բառերը փոխարինել «յոթերորդ օրը» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 121-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) հայցվորի կամ հայցվորի ներկայացուցչի հեռախոսահամարը:»:

Հոդված 10. Օրենսգրքի 124-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «յոթնօրյա ժամկետում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի,» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով՝

«2. Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 1.1-ին մասին համապատասխան դատավորի աշխատակազմի կողմից կազմվում է արձանագրություն հայցադիմումում առկա թերությունների մասին՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված

ժամկետը հաշվարկվում է արձանագրությամբ մատնանշված թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:»:

Հոդված 11. Օրենսգրքի 126-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է արբիտրաժի վճիռ, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում կամ նոտարի կողմից արձակած վճարման կարգադրություն, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը կամ նոտարի կողմից վճարման կարգադրություն արձակելը մերժելու դեպքի.».

2) 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատարանի որոշումը ուղարկվում է նաև հայցադիմումում նշված այլ անձանց՝ միջնորդության հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացվել է հայցի ապահովում կամ ապացույցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն»:

Հոդված 12. Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-1.3-րդ մասերով.

«1.1. Այն դեպքերում, երբ չեն պահպանվել սույն օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները՝ այդ թվում հայցադիմումին չի կցվել պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը կամ հայցադիմումը ստորագրված չէ՝ դատավորի աշխատակազմը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել հայցվորին հայցադիմումում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության

դեպքում դատավորի աշխատակազմը նույն ժամկետում կարող է կազմել հայցադիմումում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերությունները արձանագրությունը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ քան կազմման հաջորդ օրը ուղարկվում է հայցվորին:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում կայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը կամ հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր:

1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները չվերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին, եթե առկա են հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքեր:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Այն դեպքերում, երբ հայցադիմում առկա թերությունների վերացման համար հայցվորը չի տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում՝ առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կայացնում է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում՝ այն հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկելով հայցվորին:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով.

«2.1. Առաջին ատյանի դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը՝ հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկում է հայցվորին: Դատարանի որոշումը ուղարկվում է նաև հայցադիմումում նշված այլ անձանց՝ միջնորդության հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ներկայացվել է հայցի ապահովում կամ ապացույցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն»:

Հոդված 13. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բացառիկ դեպքերում, երբ առկա են դատավորի կամքից անկախ, օբյեկտիվ հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում վճռի հրապարակումը, դատարանը կարող է մինչև 15 օրով երկարաձգել վճռի հրապարակման ժամանակը՝ այդ մասին ծանուցելով գործին մասնակցող անձանց:»:

Հոդված 14. Օրենսգրքի 297-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին մասում «երկուհազարապատիկը» բառերը փոխարինել «հինգհազարապատիկը» բառերով:

2) 3-րդ մասի 3-րդ կետում «երկուհազարապատիկը» բառը փոխարինել «հինգահազարապատիկը» բառով:

3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել հայցադիմումի պատասխան.».

4) 4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործի չի կարող բննվել պարզեցված վարույթի կարգով, ինչպես նաև պարզեցված վարույթի կարգով գործի բննությունը դադարեցվում է, եթե՝»:

Հոդված 15. Օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Առաջին ատյանի դատարանը գործը պարզեցված վարույթի կարգով բննելու հարցը լուծում է հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ: Սույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատարանը պարզեցված վարույթ կիրառում է մինչև նախնական դատական նիստի ավարտն առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ, իսկ 4-րդ կետով նախատեսված դեպքում՝

հայցադիմումի պատասխանն ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում՝ առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ:»:

Հոդված 16. Օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Առաջին ատյանի դատարանը պարզեցված վարույթի կարգով գործի քննության արդյունքում եզրափակիչ դատական ակտը կայացնում և հրապարակում է պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից չորս ամսվա ընթացքում՝ բացառությամբ սույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով պարզեցված վարույթ կիրառելու դեպքերի, որի պարագայում եզրափակիչ դատական ակտը կայացվում և հրապարակվում է պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում:»:

Հոդված 17. Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ներկայացվել է ամուսնալուծության և (կամ) ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ պահանջ.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ.

«8) հայցն ակնհայտ անհիմն է կամ ոչ իրավաչափ:»:

Հոդված 18. Օրենսգրքի 305-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «15-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «մեկամսյա ժամկետում» բառերով.

2) հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Արագացված դատաքննության կիրառմամբ կայացված եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելու օրվանից 15-օրյա ժամկետում, եթե դրա դեմ նույն ժամկետում վերաքննիչ բողոք չի բերվում»:

Հոդված 19. Օրենսգրքի 308-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 308. Վճարման կարգադրություն արձակելու գործերի ենթակայությունը և ընդդատությունը

1. Վճարման կարգադրություն արձակելու գործը ենթակա է առաջին ատյանի դատարանին, եթե առկա չէ կողմերի միջև կնքված պայմանագիր, որով կողմերը որոշել են տվյալ պայմանագրից բխող որոշակի դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացնել նոտարին:

2. Առաջին ատյանի դատարանին ենթակա վճարման կարգադրություն արձակելու գործը քննում է պարտապանի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարանը:»:

Հոդված 20. Օրենսգրքի 310-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «309-րդ» բառը փոխարինել «311-րդ» բառով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«6) կողմերի միջև կնքված պայմանագրով առկա է համաձայնություն պայմանագրից բխող որոշակի դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում՝ վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացնել նոտարին:»:

Հոդված 21. Օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների առկայության դեպքում՝ նաև արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի պատճենը մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթ:»:

Հոդված 22. Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը դատարանը քննում է այն դեպքում, երբ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար դիմումը չէր կարող ներկայացվել մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքով սահմանված դեպքերում, և երբ արբիտրաժի վայր է հանդիսացել Հայաստանի Հանրապետության տարածքը:»:

Հոդված 23. Օրենսգիրքը հետևյալ բովանդակությամբ լրացնել 51.1-րդ գլխով՝

«ԳԼՈՒԽ 51.1.

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱԿՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 345.1. Նոտարի կողմից արձակված վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը

1. Նոտարի արձակած՝ կողմերի համար պարտադիր դարձած վճարման կարգադրությունը կողմերը կարող են վիճարկել դատական կարգով վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

2. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու մասին դիմումը կարող է ներկայացվել այն կողմերի համար պարտադիր դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

3. Նոտարի կողմից արձակված վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է՝

1) պարտապանի հաշվառման (բնակության) վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե պարտապանը ֆիզիկական անձ է.

2) պարտապանի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե պարտապանն իրավաբանական անձ է:

Հոդված 345.2. Դիմումին ներկայացվող պահանջները

1. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումում պետք է նշվեն՝

1) դատարանի անվանումը, որտեղ ներկայացվում է դիմումը,

2) վճարման կարգադրության կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և համարը,

3) վճարման կարգադրությունը կողմերի համար պարտադիր դառնալու ամսաթիվը,

4) վճարման կարգադրությունը վիճարկելու հիմքերն ու հիմնավորումները,

5) վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը:

2. Վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումին կցվում են՝

1) վճարման կարգադրության օրինակը.

2) օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը.

3) դիմումը և դրան կից փաստաթղթերը մյուս կողմին և նոտարին ուղարկելը հավաստող փաստաթուղթը:

3. Դատարանը սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը, եթե այն ներկայացվել է սույն օրենսգրքի 345.1-ին հոդվածի կամ սույն հոդվածի պահանջների խախտմամբ:

Հոդված 345.3. Դիմումի քննությունը

1. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումն առաջին ատյանի դատարանը քննում է դիմումը վարույթ ընդունելու օրվանից մեկամսյա ժամկետում՝ առանց դատական նիստ հրավիրելու:

2. Դատարանը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ

պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Դատական նիստի վայրի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են:

3. Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը նշվում են դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ:

4. Դատարանը կարող է վճարման կարգադրություն արձակած նոտարից պահանջել այն գործով նյութերը, որով կայացված որոշումը վիճարկվում է դատարանում:

5. Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է նոտարի արձակած վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու՝ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:

Հոդված 345.4. Դատարանի որոշումը

1. Դիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է որոշում՝ դիմումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու և նոտարի արձակած վճարման կարգադրությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու կամ դիմումն ամբողջությամբ մերժելու մասին:

2. Դատարանի որոշումը պետք է բավարարի սույն օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները:

3. Դատարանի որոշումը հրապարակվում է վճռի հրապարակման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից յոթ օր հետո, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվում:

4. Դատարանի որոշումը կողմերին է ուղարկվում ընդունման պահից եռօրյա ժամկետում:»:

Հոդված 24. Օրենսգրքի 362-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հեռակա և արագացված դատաքննության կիրառմամբ, ինչպես նաև պարզեցված վարույթի կարգով կայացված գործի վարույթը կարճելու մասին որոշման կամ վճռի դեմ վերաբննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակելու օրվանից տասնհինգօրյա ժամկետում:»:

Հոդված 25. Օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Բողոքին կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ հայցադիմումը վերադարձնելու և ընդունումը մերժելու դեպքերի, վերաբննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաբննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Բողոքին կարող են կցվել բողոք բերող անձի այլ միջնորդությունները: Ներկայացուցչի ստորագրած բողոքին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 377-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «երեք ամսվա» բառերը փոխարինել «վեց ամսվա» բառերով.

2) 2-րդ մասում «երկշաբաթյա ժամկետում» բառերը փոխարինել «տասնհինգօրյա ժամկետում» բառերով:

Հոդված 27. Օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վճռաբեկ բողոքին կցվում են օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու դեպքերի, վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վճռաբեկ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Բողոքին կարող են կցվել բողոք բերող անձի այլ միջնորդությունները: Ներկայացուցչի ստորագրած բողոքին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը:»:

Հոդված 28. Օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը հարուցված քաղաքացիական գործերով դատական ակտերի հրապարակման կարգի նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կանոնը:»:

Հոդված 32. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, որն

ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, ինչպես նաև բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետնորենքն ուժի մեջ մտնելը, ինչպես նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով (այսուհետ՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած ակտերի դեմ բողոքները ներկայացվում են վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան:

3. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետնորենքն ուժի մեջ մտնելը հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտերի դեմ բողոքները ներկայացվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ:

4. Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը գործելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքների քննության արդյունքում Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտության դեպքում այն նոր քննության է ուղարկում հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան:

5. Սույն օրենքի 19-րդ հոդվածը, 20-րդ հոդվածի 2-րդ կետը և 23-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը նոտարին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի գործարկմանը հաջորդող օրվանից:

6. Սույն օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման պահից երկու ամիս հետո:

Նախագիծ
Կ-452²-02.12.2022-ՊԻ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-452²-02.12.2022-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի 1-ին մասում «համաձայնեցման և համագործակցության» բառերը փոխարինել «համաձայնեցման, համագործակցության և արագացված» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասում «վերաքննիչ քրեական դատարանը» բառերից հետո լրացնել «, վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «համաձայնեցման» բառից հետո լրացնել «կամ արագացված» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 23.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«23.1) դատարանին միջնորդելու՝ կիրառելու արագացված վարույթ.»:

Հոդված 5. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետում՝ «համաձայնեցման կամ համագործակցության» բառերից հետո լրացնել «կամ արագացված» բառերը:

Հոդված 6. Օրենսգրքի 260-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության» բառերը փոխարինել «Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական» բառերով:

2) 2-րդ մասը շարադրել հետյալ խմբագրությամբ.

«2. Վերաքննիչ քրեական դատարանին ընդդատյա են բոլոր այն վարույթները, որոնցով առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերանայման բողոք է բերվել, բացառությամբ հակակոռուպցիոն դատարանի դատական ակտերի դեմ բերված վերանայման բողոքներով վարույթների, որոնք ընդդատյա են վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին:».

~~3~~3) 4-րդ մասում «վերաքննիչ քրեական» բառերը փոխարինել «վերաքննիչ հակակոռուպցիոն» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում՝ «համաձայնեցման վարույթ» բառերից հետո լրացնել «կամ արագացված վարույթ» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 318-րդ հոդվածում՝

1) վերնագրում՝ «**Համաձայնեցման վարույթ**» բառերից հետո լրացնել «**կամ արագացված վարույթ**» բառերը.

2) լրացնել 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդության առկայության դեպքում դատարանն իրականացնում է սույն օրենսգրքի 55.1-ին գլխով նախատեսված հարցերի քննարկում:»:

Հոդված 9. Օրենսգրքի 333-րդ հոդվածի 4-րդ մասում «պահանջելու» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգում հարցում կատարելու միջոցով,» բառերը:

Հոդված 10. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 55.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 55.1

ԱՐԱԳԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 464.1. Արագացված վարույթ կիրառելու հիմքը

1. Դատարանը արագացված վարույթ կիրառում է հանրային մեղադրանքով նախնական դատալսումների ընթացքում՝ մեղադրյալի միջնորդության հիման վրա:

2. Արագացված վարույթ չի կարող կիրառվել, եթե՝

1) մեղադրյալը մեղադրվում է առանձնապես ծանր հանցանք կատարելու համար.

2) վարույթում ներգրավված մի քանի մեղադրյալից առնվազն մեկն առարկում է արագացված վարույթ կիրառելու դեմ.

3) մեղադրյալը չունի պաշտպան կամ միջնորդությունը ներկայացրել է առանց պաշտպանի հետ խորհրդակցելու.

4) արագացված վարույթ կիրառելու դեմ իրավական կամ փաստական հիմնավորմամբ առարկում է հանրային մեղադրողը.

5) առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ, և արագացված վարույթ կիրառելու դեմ առարկում է տուժողը:

Հոդված 464.2. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդության լուծումը

1. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը դատարանը քննարկում է նախնական դատալսումների ընթացքում՝ մեղադրյալի, նրա պաշտպանի, հանրային մեղադրողի պարտադիր մասնակցությամբ:

2. Միջնորդության ներկայացումից հետո հանրային մեղադրողը ներկայացնում է մեղադրանքի փաստական հիմքը, ինչպես նաև մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը:

3. Միջնորդությունը քննարկելիս դատարանը մեղադրյալին հարցնում է, թե արդյոք նրան պարզ է ներկայացված մեղադրանքը, համաձայն է արդյոք նա մեղադրանքի հետ, պնդում է արդյոք արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը, արդյոք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը արդյոք նա խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արդյոք արագացված վարույթ կիրառելու հետևանքները:

4. Դատարանը բավարարում է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը, եթե առկա է սույն օրենսգրքի 464.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը, բացակայում են սույն օրենսգրքի 464.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ արագացված վարույթի կիրառումը բացառող հանգամանքները, ինչպես նաև եթե մեղադրյալը համաձայն է իրեն մեղսագրվող արարքին, միջնորդությունը ներկայացրել է կամավոր և գիտակցում է իր միջնորդության բնույթը և հետևանքները:

5. Դատարանը որոշում է կայացնում արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը մերժելու և նախնական դատալսումները ընդհանուր կարգով շարունակելու մասին, եթե՝

1) մեղադրյալին մեղսագրվող արարքն ակնհայտորեն կատարվել է մեղադրյալ չհանդիսացող այլ անձի կողմից կամ նրա մասնակցությամբ.

2) մեղադրյալին մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին.

3) սույն հոդվածի 3-րդ մասի հարցերից որևէ մեկին տրվում է ժխտական պատասխան:

6. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով

ապացույցների հետազոտում չի իրականացնում և որոշում է կայացնում լրացուցիչ դատալսումներ անցկացնելու մասին:

Հոդված 464.3. Արագացված վարույթով լրացուցիչ դատալսումները

1. Արագացված վարույթով լրացուցիչ դատալսումների ընթացքում դատարանը քննարկում է մեղադրյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների, ինչպես նաև նրա անձը բնութագրող հանգամանքների և պատժի վերաբերյալ հարցերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հարցերի քննարկումն ավարտելուց հետո դատարանը հեռանում է առանձին սենյակ՝ հայտարարելով դատավճռի հրապարակման վայրը, տարին, ամիսը, օրը և ժամը:

Հոդված 464.4. Արագացված վարույթով դատավճիռ կայացնելը

1. Արագացված վարույթի արդյունքով դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ սույն օրենսգրքի 347-350-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Դատարանը արագացված վարույթի արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի վերաբերելի դրույթները:

3. Եթե առկա է գույքային հայց, ապա այն թողնվում է առանց լուծման:

4. Սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարութային ծախսերը մեղադրյալից ենթակա չեն բռնագանձման:

5. Դատավճիռը հրապարակելուց հետո դատավորը կողմերին պարզաբանում է նաև դատավճիռը բողոքարկելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները:

Հոդված 464.5. Արագացված վարույթով դատավճռի բողոքարկման սահմանները

1. Սույն օրենսգրքի 464.4-րդ հոդվածին համապատասխան կայացված դատավճիռը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, սակայն այն չի կարող բողոքարկվել սույն օրենսգրքի 373-րդ հոդվածով և 375-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերով:»:

Հոդված 113. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 2-3-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերն ուժի մեջ մտնելը, ինչպես նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած ակտերի դեմ բողոքները ներկայացվում են վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան:

3. Մինչև սույն օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերն ուժի մեջ մտնելը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով վերաքննիչ քրեական դատարանի կայացրած դատական ակտերի դեմ բողոքները ներկայացվում են Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ:

4. Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը գործելուց հետո սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքների քննության արդյունքում Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը վարույթը նոր քննության փոխանցելու անհրաժեշտության դեպքում այն նոր քննության փոխանցում է հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան:

Նախագիծ
Կ-452³-02.12.2022-ՊԻ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-452³-02.12.2022-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» 2020 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-240-Ն օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասում «վերաքննիչ քաղաքացիական» բառերը փոխարինել «վերաքննիչ հակակոռուպցիոն» բառերով, իսկ «Վերաքննիչ քաղաքացիական» բառերը՝ «Վերաքննիչ հակակոռուպցիոն» բառերով.

2) 8-րդ մասում «Վերաքննիչ քաղաքացիական» բառերը փոխարինել «Վերաքննիչ հակակոռուպցիոն» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~ 2024 թվականի հունվարի 1-ից:

Նախագիծ
Կ-452[4]-02.12.2022-ՊԻ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-452[4]-02.12.2022-ՊԻ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասում «Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին» բառերը փոխարինել «Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~ 2024 թվականի հունվարի 1-ից: